

ուեցան նորեր արեմտեան ճարտարապետութեան ուճով: Կեսարիոյ մէջ կը յիշատակուին Ս. Պետրոս, Ս. Լաւրենտիոս և Ս. Յովհաննէս եկեղեցիները: Բոլոր ուխտաւոր ուղեգիրները կը նկարագրեն կործանուած եկեղեցիներուն աւերակները: (Մանրամասնութիւնները տեսնել Ղ. Վ. Ե. էջ 443-452):

Յիշենք Կեսարիոյ հետեւալ աւանդութիւնները.

Քրիստոսի ընթրեաց սկիհը(*) . — Caffaro ի «Les Annales de gênes» գրքին մէջ Կեսարիոյ պաշարման վրայ կը գտնուին խիստ հետաքրքրական իրողութիւններ, որոնցմէ մին է saint-graal կոչուած Քրիստոսի ընթրեաց սկիհը այս թուականին: Ահաւասիկ անոր աւանդութիւնը: Սաբայի թագուհին այս սկիհը բերած էր Եթովպիայէն՝ ուր ան արեւի պաշտամունքին կը գործածուէր և յետոյ տրուած էր Սողոմոնին: Նոյն ըսկիհը կամ ամանը մինչև Հերովդէսի ժամանակ կը մընար արքունի դանձը, եւ ի վերջոյ ծերակուտական Նիկողիմոսի ստացուածքը եղաւ: Վերջնոյս միջոցաւ էր որ սուրբ ընթրեաց համար Տիրոջը տրամադրութեան տակ զրուեցաւ: Յովսէփ Արիմատացին ալ այս միւսնոյն ամանին մէջ ամփոփեց այն արիւնը որ կը հոսէր խաչեալ Յիսուսի վէրքերէն, և այդ պատճառաւ է որ ան արքունական արիւն անունը առած է (sanguis regalis, sangreal, saint-greal կամ saint-graal կը

(*) Միջին դարու բարեպաշտական գրոյցներուն մէջ կը յիշուի ան իբր հոգեզգաց բաժակ գնասիկեան եւ սահարականներու ընկերութեան իմաստութեան իբր խորհրդանշան: Վերոգրեալ graal բառին մեկնութիւններէն մին հետեւեալը կը նկատուի. gnosia regit Animus liberat (Mis. Բ. հաս. էջ 348): Այս աւանդութեան ծագումը Նիկողիմոսի անվաւեր աւեարանէն է (Bru. էջ 220):